ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի
2017 թվականի հաշվետվություն

2017 թվականի ընթացքում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի գործունեության հիմնական ուղղություններն են եղել.

1. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ

Մշակվել են 30-ից ավելի իրավական ակտերի նախագծեր: Առավել կարևորներն են.

1) «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծ: Նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն: Օրենքի նախագծի ընդունումը նպատակ ունի հստակեցնել գիտության ոլորտում ՀՀ կառավարության և պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունները, միջազգային չափանիշներին համապատասխանեցնել գիտական կադրերի պատրաստման մեխանիզմները, կանոնակարգել գիտական աշխատողի աշխատանքի վարձատրության և թոշակավորման հարցերը, գիտության ոլորտում օտարերկրյա ներդրումների հետ կապված հարաբերությունները և այլն:

2) ՀՀ կառավարության 2017 թ. օգոստոսի 17-ի նիստի «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրին և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 35 արձանագրային որոշում: Ծրագիրը գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում գերազանցության խթանման և միջազգային ասպարեզում, առաջին հերթին՝ Եվրոպական հետազոտական տարածքում, մրցունակ ազգային գիտահետազոտական համակարգ ստեղծելուն ուղղված միջոցառումների ու դրանց արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշների ամբողջություն է:

3) ՀՀ կառավարության 2017 թ. օգոստոսի 24-ի «Գիտական ծրագրերի ինտեգրմանն աջակցության կենտրոն» հիմնադրամ ստեղծելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» N 1034-Ն որոշում: Հիմնադրամի գործունեության հիմնական նպատակն է խթանել գիտության, կրթության, տեխնոլոգիաների և նորարարության ոլորտներում Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող ծրագրերին ՀՀ-ում գիտական գործունեություն իրականացնող կազմակերպությունների և առանձին գիտնականների մասնակցությունը, այդ նպատակով համապատասխան տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և տարածումը: Հիմնադրամի անունից հանդես եկող

պետական կառավարման լիազորված մարմինը ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն է:

4) «Գիտական կամ գիտատեխնիկական պետական կազմակերպությունների վարչական պաշտոնների անվանացանկը և դասակարգումը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է սահմանել նշված պաշտոնների անվանացանկը, դասակարգումը և այդ պաշտոնները զբաղեցնող անձանց իրավասությունները:

2. ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀՀ ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհրդի քարտուղարության վարման շրջանակներում կազմակերպվել և անցկացվել է.

1) երկակի նշանակության ծրագրերի աջակցության մրցույթի հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնող մասնագիտական փորձագիտական խորհրդի նիստ,
2) ՀՀ ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհրդի նիստ: Քննարկվել են հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով ներկայացված ծրագրերը:

2.2 Գիտական ծրագրերի մրցույթներ

Ամփոփվել են՝

1) Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի հետ համատեղ մրցույթ-2016՝ 56 հայտ, ֆինանսավորվել է 19-ը:

2) Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության հետ հուշագրի շրջանակներում համատեղ մրցույթ-2016՝ 24 հայտ, ֆինանսավորվել է 10-ը:

3) ԵՊՀ-ի և ՌԴ «Հարավային դաշնային համալսարան» բարձրագույն կրթության դաշնային պետական ինքնավար կրթական հաստատության հետ համատեղ եռակողմ մրցույթ-2016՝ 7 հայտ, ֆինանսավորվել է 5-ը:

4) Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմի կողմից հայտարարված հայագիտական հետազոտությունների նախագծերի աջակցության մրցույթ - 2016՝ 12 հայտ, ֆինանսավորման է երաշխավորվել 6-ը:

5) Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության հետ Ակադեմիական և գիտական շարժունության միջազգային մրցույթ- 2016 թ.՝ 1 հայտ, երաշխավորվել է ֆինանսավորման:

Հայտարարվել և կազմակերպվել է գիտական ծրագրերի ֆինանսավորման 7 մրցույթ, որից 4-ը՝ միջազգային:

1) ՌԴ «Գիտության և տեխնիկայի ոլորտում փոքր ձեռնարկությունների զարգացմանն աջակցության հիմնադրամի» հետ համատեղ մրցույթ՝ 10 հայտ, արդյունքներն ամփոփվում են:

2) Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի հետ համատեղ մրցույթ՝ 148 հայտ, արդյունքներն ամփոփվում են:

3) Գիտական հետազոտությունների աջակցության եվրասիական ասոցիացիայի հետ համատեղ բազմակողմ ծրագրերի աջակցության մրցույթ՝ 15 հայտ, արդյունքներն ամփոփվում են:

4) Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության հետ համատեղ Ակադեմիական և գիտական շարժունության միջազգային մրցույթ՝ 10 հայտ, ֆինանսավորվել է 4-ը:

5) երկակի նշանակության ծրագրերի աջակցության մրցույթ՝ 10 հայտ, ֆինանսավորվել է 4-ը:

6) «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի «AREAL» գծային արագացուցչի վրա հետազոտությունների իրականացման մրցույթ՝ 10 հայտ, ֆինանսավորվել է 5-ը:

7) Բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարների տրամադրման հայտերի ընտրության մրցույթ՝ 97 հայտ, ֆինանսավորվել է 31-ը: Արդյունքում՝ ընտրված գիտնականները 2017 թ. հուլիսի 1-ից մեկ տարի ամսական կտրվածքով ստանում են 75 000 դրամ հավելավճար՝ ներառյալ հարկերը:

2.3. Գիտական փորձաքննություն

1. Կազմակերպվել է 2016-2017 թթ. հայտարարված 12 մրցույթների հայտերի առցանց հավաքագրումը, տեխնիկական ու գիտաչափական վերլուծությունը, գիտական փորձաքննությունը, ամփոփվել են 8 մրցույթի արդյունքները:

2. Իրականացվել է նախկինում կազմակերպված մրցույթների գիտական թեմաների թվով 36 ամփոփիչ հաշվետվությունների գնահատումը:

3. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի գիտական փորձաքննության համակարգի միջոցով կազմակերպվել է Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից 2017 թ. կազմակերպված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված 13 հայտերի գիտական փորձաքննությունը: Ստացված փորձագիտական եզրակացությունները փոխանցվել են ԼՂՀ:

4. Աշխատանքներ են տարվում ՀՀ-ում ու արտերկրում բնակվող հայազգի գիտնականներին միավորող միասնական փորձագիտական համակարգի կայքէջի նախապատրաստման ուղղությամբ:

2.4. Ֆինանսավորում

Կազմակերպվել են գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի ֆինանսավորման գործընթացները:

1) բազային ֆինանսավորում

1.1 «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի ենթածրագրերի շրջանակներում ֆինանսավորում/աջակցություն է տրամադրվել 70 կազմակերպության 160 ծրագրի համար: Իրականացվել է գիտական կազմակերպությունների և բուհերի լաբորատորիաների/ ինստիտուտների գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորումը՝ ծրագրային հիմունքներով: Բացի դրանից ֆինանսավորվել են մի շարք այլ ենթածրագրեր, այդ թվում՝

- «Գիտական միջոցառումների կազմակերպման աջակցություն» ենթածրագիր՝ 25 կազմակերպությունների 40 գիտական միջոցառումների կազմակերպման համար, ընդհանուր ֆինանսավորման ծավալը՝ 19645.0 հազար ՀՀ դրամ:

- «Երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման աջակցություն» ենթածրագիր՝ 8 կազմակերպությունների 12 երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման համար, ընդհանուր ֆինանսավորման ծավալը՝ 6000.0 հազար ՀՀ դրամ:

- «Համակարգի գիտական գործուղումների իրականացում» ենթածրագիր՝ 8 կազմակերպությունների 29 գիտաշխատողների՝ միջազգային գիտական միջոցառումներին մասնակցելու համար:

- «Գիտական հրատարակումների և գիտության մասսայականացման աջակցություն» ենթածրագիր՝ 3 կազմակերպությունների (ընդհանուր ֆինանսավորման ծավալը 14 949,5 հազար ՀՀ դրամ).

- «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացում» ենթածրագիր՝ 6 կազմակերպությունների (ընդհանուր ֆինանսավորման ծավալը 25000.0 հազար ՀՀ դրամ)՝ գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար,

- «Գիտական կենտրոնների ստեղծում և տեխնոլոգիական հետազոտական համալսարանի պիլոտային ծրագրի իրականացում» ենթածրագիր՝ աջակցություն է տրամադրվել 1 կազմակերպության, ընդհանուր ֆինանսավորման ծավալը՝ 14 500,0 հազար ՀՀ դրամ:

1.2 «Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն» ծրագիր ՝ **5** գիտական կազմակերպություն **5** ծրագիր:

2) Նպատակային-ծրագրային պետական ծրագրերի ֆինանսավորում

Ֆինանսավորում է տրամադրվել 14 կազմակերպության 14 ծրագրի համար:

3) պայմանագրային (թեմատիկ) ծրագրերի ֆինանսավորում՝

3.1 Ֆինանսավորում է տրամադրվել 39 կազմակերպության՝ 169 գիտական թեմա:

Այդ թվում՝

- «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր-2015» մրցույթի շրջանակներում՝ 3 կազմակերպության 5 գիտական թեմա,

- Արցախի հետ համագործակցության շրջանակներում՝ 2 կազմակերպության 6 գիտական թեմա:

3.2 Ֆինանսավորվել են նաև՝

- «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի «AREAL» գծային արագացուցչի վրա իրականացվող 5 գիտական թեմա՝ 4 կազմակերպություն,

- Ասպիրանտների հետազոտությունների աջակցության 28 թեմա՝ 17 կազմակերպություն,

- Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության 37 թեմա՝ 23 կազմակերպություն,

- Բարձր արդյունավետությամբ հատուկ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող լաբորատորիաներին աջակցության 4 ծրագիր՝ 4 կազմակերպություն,

- Երկակի նշանակության 4 ծրագրեր՝ 4 կազմակերպություն,

- Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված 9 գիտական թեմա՝ 8 կազմակերպություն,

- Բարձր արդյունավետությամբ աշխատող 128 գիտաշխատողներ, այդ թվում՝ մինչև 35 տարեկան:

4) «Գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարներ» ծրագրի շրջանակներում հավելավճարներ են տրվել 638 գիտությունների դոկտորի և 1612 գիտությունների թեկնածուի (տվյալները 2017 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ են):

5. Գիտական կազմակերպությունների անձնագրավորում

Իրականացվել է ՀՀ գիտական կազմակերպությունների հերթական անձնագրավորումը՝ 2015-2016 թթ. գործունեության վերաբերյալ: 2017 թվականի հոկտեմբերի 30-ի դրությամբ հավաքագրվել են թվով 74 գիտական կազմակերպությունների տվյալներ, ստեղծվել է համապատասխան շտեմարան:

Իրականացվել է 2016 թվականի դեկտեմբերի դրությամբ թվով 87 ՀՀ գիտական կազմակերպությունների աշխատակիցների վերաբերյալ տվյալների հավաքագրում և մշակում, ստեղծվել է համապատասխան շտեմարան, որը պարունակում է 6093 գիտական և վարչական աշխատողների մասին տվյալներ՝ գերատեսչությունը, անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, անձնագրի սերիան և համարը, գիտական աստիճանը, պաշտոնը, համատեղությունների մասին տվյալներ և այլն:

Թարմացվել է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճանի համար հավելավճար ստացողների շտեմարանը, որը 2017 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ պարունակում է 644 դոկտորի և 1620 թեկնածուի մասին տվյալներ:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

3.1. Կազմակերպվել են գիտական համագործակցության պայմանագրերի/ հուշագրերի մշակման և կնքման աշխատանքները.

1) 2017 թ. մայիսի 16-ին ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության ինստիտուտ» Հայաստանի ազգային ներկայացուցչության միջև ստորագրվել է համագործակցության մասին մտադրությունների հուշագիր, որով նախատեսվում է աջակցել երկկողմ հետաքրքրություն ներկայացնող գիտահետազոտական ծրագրերի իրականացմանը, կազմակերպել համատեղ գիտաժողովներ, աշխատանքային հանդիպումներ և այլ միջոցառումներ:

2) 2017 թ. մայիսի 26-ին ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Բուլղարիայի ազգային գիտական հիմնադրամի միջև ստորագրվել է «Գիտական և գիտահետազոտական համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիր, որով նախատեսվում է աջակցել երկկողմ հետաքրքրություն ներկայացնող գիտահետազոտական ծրագրերի իրականացմանը, գիտնականների (հատկապես երիտասարդ) կարճաժամկետ կամ երկարաժամկետ փոխանակմանը, ինչպես նաև կազմակերպել համատեղ գիտաժողովներ, աշխատանքային հանդիպումներ և այլ միջոցառումներ:

3) 2017 թ. օգոստոսի 1-ին ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտում Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի և Հայկական ատոմային էլեկտրակայանի միջև ստորագրվել է «Միջուկային և ռադիոակտիվ նյութերի տեխնիկական և քրեագիտական փորձաքննության համատեղ լաբորատորիայի ստեղծման մասին» փոխըմբռնման հուշագիրը: Լաբորատորիան ստեղծվել է ՀԱՊՀ Միջուկային անվտանգության տարածաշրջանային ուսումնական կենտրոնի և ՀԱԷԿ-ի Արտաքին ճառագայթային հսկողության լաբորատորիայի ռեսուրսների օգտագործմամբ՝ միջուկային ռադիոակտիվ նյութերի տեխնիկական և քրեագիտական փորձաքննության բնագավառներում իրականացվող գիտական և գիտակրթական աշխատանքների համատեղման, նշված բնագավառներում ՀՀ-ում կատարվող հետազոտությունների համակարգման, դրանց արդյունավետության ու միջազգային ճանաչելիության մակարդակի բարձրացման նպատակով:

3.2 Բանակցություններ են վարվել Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի հետ 2018 թվականին հայ-բելառուսական կիրառական հետազոտությունների համատեղ նախագծերի մրցույթ կազմակերպելու ուղղությամբ: Մշակվել է նախատեսվող մրցույթի հրավերի փաթեթը:

3.3 Շարունակվել են հայ-ֆրանսիական, հայ-գերմանական, հայ-իտալական, հայ-ռուսական, հայ-բելառուսական համատեղ ծրագրերը:

3.4 2017 թ. հոկտեմբերի 19-ին Երևանում կազմակերպվել է միջազգային նշանակություն ունեցող Գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի (МС НТИ) 21-րդ նստաշրջանը:

3.5 Կոմիտեի նախագահի ղեկավարած պատվիրակությունը տարվա ընթացքում իրականացրել է մի շարք կարևոր այցելություններ, այդ թվում՝

- Արցախի Հանրապետություն՝ հանդիպում Արցախի գիտական կենտրոնում, Արցախում իրականացվող գիտական թեմաների ամփոփման հաշվետվությունները, հետագա համագործակցությանն ուղղված խնդիրները քննարկելու նպատակով,
- Գյումրի՝ Շիրակի հայագիտական կենտրոնի հիմնադրման 20-ամյակին նվիրված միջոցառմանը մասնակցելու, ինչպես նաև Շիրակի մարզային ծրագրի շրջանակներում իրականացված գիտական թեմաների ամփոփման հաշվետվությունները, հետագա համագործակցությանն ուղղված խնդիրները քննարկելու նպատակով,
- ՌԴ Մոսկվա՝ ՌԴ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչների և գիտական կազմակերպությունների տնօրենների հետ հանդիպում, ԱՊՀ և ԵԱՏՄ շրջանակներում բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում ռուս-հայկական համագործակցության զարգացմանն ուղղված հարցեր քննարկելու նպատակով,
- Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ Հայաստանի Հանրապետությունում միջուկային փորձաքննության ապագա զարգացման, ինչպես նաև նշված ոլորտում հայ-ամերիկյան համագործակցության խթանման հարցերին նվիրված հանդիպմանը մասնակցելու նպատակով:
- Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Վաշինգտոն՝ Երկրի դիտարկումների խմբի (GEO) 14-րդ լիագումար նստաշրջանին և Գործադիր կոմիտեի 41-րդ հանդիպմանը մասնակցելու նպատակով: